

شاهان شاه بناهای شاه



Wap... bap... ke... (mirrored text)



Wap... bap... ke... (mirrored text)



Wap... bap... ke... (mirrored text)

Իսկ օր
Այլ քան
Կարանքի էֆէն-
երու համար խոս-
տալըներու մասին քոն-
ու մը տուեր է: Անկիր-
րուն մէջ գտնուող կարգ
ներուն «խօս»ին չէ՛ գա-
յս քօնֆերանօր, որուն
ոեղին հոքը՝ Այլրամ կա-
ն էֆէնտին ներսած լեմօնի
կիթի բոնել ուզած են:
յն խնդիրը ատանց մեծնա-
ցուեր է:

տ խ, հակասակ իր խոր
թեան, Այլրամ կարանքի
ի այս խնդրին մէջ սխալ
ած է:

այանի է որ մարդիկ հաշտ
ով չեն գիտեր մէկզմէկու
նիքները: Ազգերն ալ այս-
ն չկայ մարդու մը, որ
աչքերով գիտէ Հրեաներու
տոյն կարողութիւնն ու
նիքները, մանաւանդ ներ-
ուր բոլոր գրամարկի-
անայինները անոնց գրպան-
ն մէջ կը գտնուին:

ս պայմաններու մէջ, Հրե-
ր վախկոտ և անձնուէր
պրով «մատար»ներու մա-
կաք չէին որոնեցիլ՝ ուն-
ր Հրեայ տիկիները:

այն թէ Այլրամ կարանքի
ին ալ պէտք չէր միայն
յանանար այս «մատար»նե-
ուելով, այլ պէտք էր հիմ-
ու փաստերով ջրէր գա-
ինչ որ շատ գիւրին բան
արդէն:

ինակի համար, կրնար սու-
տել. — Հրեաներուն վախ-
թիւնը շատ բնական է,
տե Հրեաները հարուստ
անքի քաղցրութիւնները
ելու միջոցները գիտնալ-
համար չեն ուզեր վտանգի
թարկուիլ և մեռնիլ: Երկ-
անկուտիներու և Հրեա-
միջև տարբերութիւն մը
ենկուտիները միայն իրենց
ր պաշտպանելու ստիպ-
ն, սակայն Հրեաները թէ
կեանքն ու թէ հարստու-
միւնչոյն ատեն պոշտ-
ու ստիպուած են: Այս
տառ է որ Հրեաներուն
ուելի յանդգնութիւն
տալը շատ բնական է:
մնասիրութեան գալով,
Հրեաները քսամեղի զըր-
ւթեան մը ենթարկուած
եան անձնասէր չէ՛, այլ
սէր է: Բոլոր մարդիկ

չոսյ ըլլալուն համար, Հրեա-
ներուն այս արժանիքները չեն
կարող տեսնել: Սակայն ամսո՞ս
որ այս համակրելի ցեղը՝ դարե-
րէ ի վեր շարունակուող այս
անօրինակ արժանիքը սկսաւ
կորսնցնել: Երջարգի մէջ բախ-
տախաղի կը յաճախեն, պարա-
հանգեաներու մէջ շամբանիւս կը
խմեն և Մեծ կղզիի մէջ «քէօչկ»
կը վարձեն: Ինչո՞ւ կ'ընեն այս
բաները, չենք գիտեր: Փաղտ-
նիք մը կայ մէջը: Թերեւս,
այնպէս կը կարծեն թէ մօտաւոր
սպառազայի մը մէջ դրամը պիտի
վերնայ աշխարհէն: Դրամս փո-
խանակ տուրքի յաակացնելու,
«կ'ուանեմ» կ'ըսեն թերեւս: Ինչ
որ ալ ըլլայ, եթէ ստոյգ բան
մը կայ մէջակը, այն ալ Հրեա-
յին բարոյական փոփոխութիւնն
է:

Ինչո՞ւ Այլրամ կարանքի է-
ֆէնտին... եթէ ներսած լեմօնի
և հաւկիթի անձրելի չքոնուե-
ցաւ տիկիներու կողմէ, պատ-
ճար սա՛ է որ անոնք մտածե-
ցին՝ գործի ձեռնարկել առաջ:

— Բնականաբար փոսած լե-
մոն չկայ: «Սազլամ»ներն ալ
նետելը թէ՛ հաշիւի չիգար և թէ
անխղճութիւն է: Փաղով հաւ-
կիթին, ա՛ն ալ կրակի գին է:
Փոխանակ զայն նետելու, եթէ
քիչ մը կարողի մէջ կտորենք և
ուտենք, աւելի՛ «խայրըր» է
անշուշտ...:

Յանուն Հրեութեան, կը ծա-
փանարեմ այս արդիւնքը:

Բարազան

**ԲԱՐՈՅԱԿԱՆ ԽՐԱՏՆԵՐ
ԱՄՈՒՍՆԱՑՈՂ ՆԵՐՈՒՆ**

Սա՛ մէկ ամսուան ընթաց-
քին՝ Պոլսոյ մէջ, մզկիթներու
և եկեղեցիներու գուռներուն
առջև կամ ամառի վայրերու մէջ,
ճի՛շտ հինգ հատ նորածիններ
ձգուած են:

Ատոնց ծնողքները կա՛մ չը-
քաւորութենէ մզուած, և կամ
թէ՛ իրենց ապօրինի յարարե-
րութեանց ամօթը պարտելելու
համար այս նորածինները նե-
տած են այսպէս փողոցներու
մէջ: Երկու պարագային ալ՝ զէջ
գործ:

Մեր մէջ, 4րդանը երեք զը-
րուչ ունեցողը ամուսնանալու
կ'ելլէ: Շատ լաւ, թո՛ղ կար-
գուին, հայտնի՛ բնեք որ թո՛ղ
գաւակ մըն ալ ունենան, լա՛ւ:

Սակայն, պատասխը սարուած
ծորակի մը պէս երբ հատ մը
հատ մը եւս ըսելով, չորս հատ
կը շարունակ կարգաւ, ա՛ն քեզի
անկէ հոքը տունին մէջ անհա-
մաճացնութիւնը:

Աս չաքարն է, ա՛ն վրան-
գլուխն է, սա դպրոցն է...:
Այս ծախքերուն կարելի՞ է գի-
մանալ:

Բնականաբար, կարգ մը ան-
խիղճ մայրեր և հայրեր՝ նեղու-
թեան մատնուելով, վերջապէս
իրենց աղաքը փողոցները նետե-
լու չափ ծայրացելութեան պիտի
գիւմեն:

Չարմանալի՛ բան, մինչ հա-
րուստները կը փախարին, սա-
կայն չեն կրնար գաւակ ունե-
նալ, անցին զժուարաւ իրենց
անօթութիւնը յազեցնող զոյգե-
րը կարգ կարգ, զոյգ զոյգ տղայ
կը հասցնեն: Ինչո՞ւ իրր խրատ
ըլլայ, սա՛ կ'ուզեմ բնի թէ՛
անոնք որ չպիտի կրնան զա-
ւակնին հոգալ և խնամել, թող
«վաղ» անցնին զաւակ ունենա-
լէ, եթէ ոչ այս գործին վերջը
լաւ պիտի չըլլայ:

**«ՄԱՍԻԱՐԱ» ՅՈՒԹԵԱՆ
ՎԷՍԻՔԱ**

Ոտտիկանութիւնը Բարեկեն-
դանի առթիւ գիւմակուորու իլ
ուզողներուն «վեսիքա» պիտի
տայ: Խիստ լաւ կարգադրու-
թիւն մըն է ասիկա:

Երանի՛ թէ այս դրութիւնը
միայն Բարեկենդանի համար չը
կիրարկուէր, որովհետեւ այդ
«մասիարա» ներուն վիստները
աստիճան մը սահմանափակ են
գոնէ: Սակայն մեր տղային
չըջանակներուն մէջ երբեմն ի-
րենց զէմքերուն կա՛մ գիտունի,
կա՛մ խմբագրի գիւմակը անցը-
նելով անանկ «մասիարա» յու-
թիւններ ընողներ կան որ, այս
աղջին փառքն ու խորօրութիւ-
նը շահագործելով ինչե՛ր չեն
ըներ որ...: Ուր է սա երբեմն
ինքզինքնիս չկրնալով գապել

— Ալ այսչափն ալ «մաս-
իարա» յութիւն է, չե՞նք բոնը
միթէ: Ահա՛ ասիկ «մասիարա»-
յութեան «վեսիքա»ն ատանց
տալու է, նո՛յն իսկ լրագրու-
թեան միջոցաւ, կամ թերթի չը
մտած տեղիքու մէջ՝ «տալու լով»
պէտք է ծանուցանել:

— Այն ինչը «մասիարա» է,
ամէն տեսակ «մասիարա» յու-
թիւն պիտի բնէ, գիտցած ըլ-
լաք, ո՞վ մողովուրդ, բնելով ա-
մէնքը զուշացնելու է:

ՉՈՒԱՐՃԱԼԻԲ

— Քեզի վաթսուսն տարեկան
միլիոնատէր ամուսին մը գտայ,
եթէ գործը ըլլայ, ի՞նչ կ'ու-
տաս ինձի...:

— Այս գործը յարմարցուր,
հինգ հարիւր ոսկի կուտամ քե-
զի...:

— Հինգ հարիւր ոսկի՛...
վաթսուսն տարեկան միլիոնատէր
ամուսինի մը փոխարէն... ո՞ր
է այս ատատութիւնը...:

Քսանի որ տունձ մը գտած
ենք, կիսինք մէջտեղէն...:

— Շատ լաւ, եթէ այնպէս
է, ինձի ուրեմն երեսուն տա-
րեկան միլիոնատէր մը գտի՛ր...
Չըլլա՛ր արդեօք...:

Ու չազրութիւնը բրի՞ր... Տի-
կին Ե. ք կարգուելէն անմիջա-
պէս հոքը մտցաւ իր ատաղին
ամուսինին մահուրէն զգացած
ցար...:

— Անանկ է, բայց այդ ցա-
ւը չմտցող մէկը կայ տակուին:
— Ո՞վ է որ...:
— Երկրորդ ամուսինը:

ԿԸ ՓՆՏՈՒՈՒՑ

Եկեղեցական մը, որ կատա-
րելապէս անկեղծ, անշահախն-
դիր և ազգօգուտ ըլլայ իր գոր-
ծերուն մէջ և իր կոչումին գի-
տակցութիւնը ունենայ:

Տեսես, Խորհուրդի անդամ
Տիար Աւետիս Արափեանի համ-
բուստը ամբաստանագիրը, ու-
րուն համար գրոյց կը չըջի թէ
կորսուած է Պատրիարքարանի
նրբանցքներուն մէջ և կամ թէ
«մինտեր»ի մը տակ թուխի
գրուած է, Տեղապահ Ս.ին Չատ-
կուան կարմիր հաւկիթ հասցը-
նելու համար... Եթէ սակայն
միջուկ այն ստեղծ մնայ իր ա-
թոթին վրայ:

Ազգային գործ մը՝ որուն
միջամտ իս չըլլան չարաչա՛ն ձեռ-
քեր և պնակալէզներու խմբակը
պար չքան, անոր չուրջը...:

Վարժապետ մը՝ որ իր չնչին
ամասկանը ամբողջութեամբ ըս-
տանայ մէկ անդամէն, ատանց
չարաթիւրով թաղ, Խորհրդա-
բան ներկայանալու:

Ուսուցչաց Օգնութեան Աըն-
տուկը, որուն անունը կայ և
ինքը չկայ:

ՀԱՊԱՅԸ ԵՒ ՔԱՅԱՆԱՆ

կը խորհիք Տեղապահ
կարգ մը աչքառու նախա-
թիւններուն կամ ցանկու-
ններուն մասին :

Եթե թէ՛ շատեր կան մեր
որոնք կը մեղադրեն Տե-
ղապահ իր արծաթաէր և նոյն
առժամ կ'ըսեն թէ՛ դրամը
պաշտ անհաւատ, որչափ
կը սիրեն զայն . . . Պա-
տարի համբաւու որ սե-
ւորները :

Եթե թէ՛ ինչ պարագայ խօսք,
ձեր զրպարտութիւն, զոր
արդիւնն չարամիտները, ազ-
նայեալ որ պետք վարկաբեկե-
լամար :

Եթե թէ՛ տեսներ արդեօք Պոլսոյ
մեր նախորդ Տ. Պետ-
րոսեանն, որ չնորհի. Տե-
ղապահն ատառաձեւում
նեղակայի կը վարէ հան-
աւանտ կեանք մը, սրտովին
տապախուժիւն յայտնելով
հանդէպ զայն տրուած բա-
նայածութեան հատար :

Եթե թէ՛ նուա՞ղ չնորհ մըն
նեղակայութեան հրաւիրել
նոր քանանայ մը, եւ հա-
մար թէ՛ կրնայ ազա-
նեթեկեկել ևէտի Գուլէէն
կը կրցածին չափ ամէն օր
որոն օրհնելու համար :

Եթե թէ՛ զոգործուն քայտու-
նը զոյտութիւնը քաշկոր-
նակար քանանայի մը տրու-
այս աննման մենաչնորհ՝
նոր աննախընթաց բարիք
անհաւատ, զոր ցարդ շատ
են որ կրցած են ձեռք
քանի մը «Արլուիա» յով
արդիւն կամ նպարավաճա-
ւորները ամբողջութեամբ
տու համար :

Եթե թէ՛ որ Տ. Պետրոս քա-
նանայ համար քաշելու անկա-
ն կ'ըսեն ի՞նչ ընէ սա-
նեղակայա՛նք : Փառք Աստու-
կա՞նք կը պակասի Պոլսոյ
քանի որ Տէր Հայրը օրա-
քառասուն յիսուն գերեզ-
մորն . . . օգին մէջ, եւ
. . . կը լցնեն իր գրպաննե-
կանայ անհաւատ քանի մը
զորոցութիւն ընելով, եր-
կի համար կառք մը, կամ
ինչո՞ւ չէ, նոյն իող օթո-
ւորակ, իր հանդիստին հա-
մար :

Եթե թէ՛ Տեղապահը բարեհաճ
արձակուրտ օրհնելու մենաչնոր-

նր վեհանձնութեան և զերա-
զոյն հոգածութեան իր աստ-
ատեան՝ յանձնել Տ. Պետրո-
սին, այս ալ ատառաձեւում
թեան նշան մը չէ՞ արդեօք, զոր
իր կծծիւթիւն կը թարգմա-
նեն կարգ մը չարամիտներ,
ցոյց տրուած այս ատաքինութիւնը
գիտակցարար չարամիտներով
անոր հակասակ իմաստ մը տա-
լով :

Մնաց որ, Տեղապահը ա՛յն-
քան վեհանձնօրէն ուրիշ բա-
րիքներ ալ ընծայած է այս ան-
կար քանանային, արտօնելով
զայն, որպէս զի երթայ ընդհին
Ազգ. Հիւանդանոցին մէջ, իր
ծերութեան օրերը հո՛ն անցնե-
լու համար :

Ահա՛ առիկ նպատակ որ
կարգադրութիւն մըն ալ, զոր
Տեղապահը բարեհաճած է ը ել,
ծերունի Տէր Հայրը տունի
վարձք վճարելու նման ծանր
հոգի մը փրկելու կանխահոգու-
թեամբ :

Եթե թէ՛ ըսէք թէ՛ այսքան շը-
նորհներն ալ քիչ են, կրնամ
տակաւին մատնանչել ձեզի թէ՛
Տեղապահական նո՛յն բարեհաճ
արտօնութեամբ, 5-6 սակի ալ
Պատրիարքարանի սնտուկէն ա-
տառաձեւում օրէն ցարդ վճարուած
է այս դժբախտ քանանային :

Եթե թէ՛ բոլոր ասոնք անբաւա-
կան են՝ Տ. Պետրոս քանանա-
յին և իր ընտանիքին հանդը-
տակալ պայմաններ ընծայելու
համար, Տեղապահը կրնայ ան-
շուշտ ընել տակաւին ուրիշ կար-
գադրութիւններ :

Օրինակի համար, արտօնել
Տէր Հայրը որպէս զի Պալլըզի
գերեզմանատան մէջ . . . ծագիկի
մշակութիւն ընէ, կամ թէ՛ հոն
չգտնուող ծառերուն վրայէն
հաստախիտ ձիւղերը կտրէ . . .
իր զօրաւոր բազուկներով, զա-
նոնք բարեհաճութեամբ վաճառե-
լով, իր օրապահիկը հայթայթե-
լու համար :

Ահա՛ առիկ միջոցներ, ապա-
նով կերպով դրամ շահելու :

Մի՛ ըսէք թէ՛ ասոնք չըլլա-
ւիք, անզօրմագրելի բաներ են :

Չէ՞ որ Տեղապահն է գանձա-
յղացողը :

Եւ, պետք չկայ կարծեմ ա-
ւելցնելու թէ՛ ամէն Տեղապա-
հական կարգադրութիւն ինք-
նին ազգիւր մըն է բարեաց և
օրհնութեան . . . քանի որ այդ-
պէս կը դատնին . . . պակասե-
լուներ :

Եւ տակաւին . . . ապերախ-
տութիւն կը յայտնենք . . .

ՄԵԾ-ՊԱՆՔԻ ՔԱՐՈՉՆԵՐ

Մեծ-Պանքի մտաւորութեան
առիթ, ներկայիս պատրաս-
տութիւններ կը տեսնուին կղե-
րական շրջանակներու կողմ,
եկեղեցիներու մէջ խօսուելիք
քարոզներու նիւթին մասին,
ինչ որ բնական ուշադրաւ նո-
րութիւն մըն է անհաւատ :

Չեանարկը՝ որուն սկսեալ
է, ո՛չ միայն պատուարներ նօթ
մը կը կազմէ մեր կղերին հա-
մար, այլև չափազանց գործնա-
կան միտքի յղացում մըն է ինք-
նին, զոր կ'արժէ շնորհաւորել
այժմէն, իր օրինակելի ձեռնե-
րեցութիւն :

Անշուշտ, պետք չկայ աւել-
ցնելու թէ՛ ինչպէս ամէն գոր-
ծի, նոյնպէս ա՛յս գործին նա-
խաձեռնարկն ալ նո՛յն ինքն
Տեղապահն է որ եղած է, ցարդ
Հայ ժողովուրդին շատ լաւ բա-
րիքներուն և անկին շնորհնե-
րուն վրայ շատ մը ևս աւելցնել
բարեհաճելով :

Այսպէս, Մեծ-Պանքի տա-
ջին կիրակին, Բերայի եկեղե-
ցիին մէջ, տաջին անգամ պիտի
խօսի Տեղապահը, նիւթ ունե-
նայով Տնտեսագիտութիւնը և
թուրով դրամ հաւաքելու և
հարստանալու միջոցները, որոնց
մասին իր ծանօթ ձեռնհասու-
թեամբ և անմխտելի հմտու-
թեամբ՝ յուսարանութիւններ և
յորդորներ պիտի տայ ժողովուր-
դին :

Ազգային շրջանակներու մէջ՝
ա՛յն հաստատ համոզումը կը
տիրէ թէ Բերայի եկեղեցին ունե-
կընդիրներու մեծ բազմութիւն
մը պիտի հաւաքուի այդ օրը՝
նկատելով որ քարոզի նիւթը
ինքնին բաւականէ՛ն տելի շա-
հազարական և արդէն, և կըր-
նայ օգտակար ըլլայ բոլոր մա-
մոնայապաշտներուն :

Այս առիթ, կարգապահու-
թեան հակելու և անսեղութեան
առիթ չտալու համար, կազմուած
է մասնախումբ մը որուն կ'ան-
դամակցին՝ Պ. Ս. Արիկ Մուպահ-
եաճեան, Վահան Թօշիկեան,
Արթիւր Մաղաքեան և Յակոբ
Այճեան, ինչպէս նաեւ «Եր
Լուր» բոլոր մեծ ու պղտիկ
բաժանորդները :

Այս առիթ, եկեղեցիին մէջ
պնակ պիտի շրջադաշնուի, ար-
գիւնքը Տ. Պետրոս քանանային
յատկացուելու համար :

Կ'ըսուի թէ՛ Տեղապահն Ա. ր
այժմէն իսկ տասը սակի խոս-
տացած է յիշուով պնակին :

ԱՂԲԻՍԻ ՀԱՍԱԺՈՂՈՎ

Եւրոպայի չեմ գիտեր ո՛ր
քաղաքին մէջ ազգիւր համա-
ժողով մը պիտի գումարուի : Օ-
րակարգը չտեսնա՞ք տակաւին :
Սակայն, ամէն պարագայի մէջ,
վաստ էմ թէ՛ արդորի խելք
ունեցող մէկը պիտի ըլլայ անոր
նախագահը : Աբրուրը կը մենի,
սակայն անոր խելքը ազգիւրին
մէջ կը մնայ, կ'ըսեն ընդհանրա-
պէս :

Այս ժողովին մէջ խորհրդակ-
ցութիւններ պիտի ըլլան աչ-
խորհի նշանաւոր ազգավայրերը
չանդօրծելու մասին :

Ամէն պարագայի մէջ, զէն
չպիտի ըլլար կարծեմ մէջմէկ և
եկեղեցական ներկայացուցիչ ալ
զրկել հոն մեր կողմանէ : Աբ-
րուրէն, այժմէն իսկ կը լսենք թէ՛
Արիկ Մուպահեաճեան անցագի-
րի պատրաստութիւններ կը տես-
նէ, քարտուղարութեան նոր
պաշտօն մըն ալ այս կերպով
աւելցնելու համար իր ձեռքը
գտնուածներուն վրայ :

Ի սրտէ յաջողութիւն կը
մագթենք :

ԿԻՆ ՍԱՓՐԻՉՆԵՐԸ

Հաշիւ եղած է որ Պոլսոյ
մէջ ներկայիս 250 հատ կրն
սափրիչներ կը գտնուին, որոնք
զիչեր՝ ցօրեկ, անդուլ ետանդով
մագ կը կտրեն ու կ'ամիւնն ի-
րենց գիմոզ երկուս յաճախորդ-
ները :

Ճիշտ այս պատճառաւ է որ,
ամիւրող զէմքերը ա՛յնքան
չտոցած են այս պահուս մեր
չուրջը, և քանակութիւնը եր-
թալով կ'աւելնայ ա՛յնքան, որ-
քան կը բազմապատկուի թիւր
գեղեցիկ սեւին պատկանող սափ-
րիչներուն :

Եթէ այս ընթացքը չարու-
նակուի այսպէս, գարմանայի չէ՛
անշուշտ, եթէ տեսնենք օր մըն
ալ թէ՛ բազմութիւն այնքանու-
կաններու կարգին՝ մեր կղերա-
կաններն ալ կամայ կամայ «վազ»
պիտի անցնին իրենց մօրուքէն,
պարտա ձեռքերու յանձնելով՝ ա-
նոնց վերջնական հաշուեկարգա-
րումը :

Ականջը խօսի վարդապետի
մը և Բերայի քանանայի մը :

